ները չգիտենք. վոչինչ չգիտենք հատկապես Մկդեմի մասին, վոր կենդանի պիտի լիներ դեռ ևս 1222 թվին։ Պապաք հիշում է հոր հետ ՈԿԹ=1220 թվին՝ Գեղարքունյաց Ղարանլուխ գյուղի մոտ Գազան Լոռեցու կանգնած խաչքարի արձանագրության մեջ վորպես իշխանակից, «ի յիշխանութիւնն Վասակայ եւ որդոյ իւրոյ Բարաքին . . . .» *։ Պապաքն անձամբ ևս նուիրաբերության նույնիմաստ յերկու արձանագրություն ունի թողած Վեդիի վերին ակունքներում Ջինգյոլի շրջանի Աղքիլիսա թուրքաբնակ գյուղի յեկեղեցու վրայ, տալով «մին եզն», «մին շինական», Գոմին մարգն ու ծրդուտը և ստանալով չորս ժամ յուր հոր Վասակի համար (Հավել. Ա. 11)։

Կաթուղիկեի հարավային պատի արձանագրությունը մեզ տալիս է ավելի կարևոր տեղեկություններ Վասակի, նորա յեղբայրների, վորդիների և կնոջ մասին. «եւ ածատուրք եղբարքն իմ զինակիցք Զաջուռն եւ Գրիգոր եւ սիրելի որդիք իմ հարազատք Պապաքն, Մքդէմ եւ Հասան, երկանուն Պռաւշ, տէրամբ պահպանեալ եղիցին այժմ եւ յաւիտեանս ամէն»։ Ցերկրորդ գլխի մեջ (եջ. 32. 33) տեսանք Զաջուռ Խաղբակյանի և Վասակի արձանագրությունները. սորանով հաստատվում է այս Վասակի ծագումը Հավապակի կամ Գեռաքարի Խաղբակյաններից, և հարազատ յեղբայրությունը Զաջուռ Բ. Խաղբակյանի հետ, և ապա Զաջուռի և Գրիգորի զինակցությունը իրենց ավագ յեղբորը՝ նորա պատերազմական գործողությունների մեջ, հավանորեն Բջնիի, Քեղվա և Վայոց ձորերի նվաճման ժամանակ։

Զաջուռի վորդի Գրիգորը Վաճառքում թողած յուր արձանագրության մեջ հորն անվանում է «քաջ զաւրական» (եջ. 33). Զաջուռը Խաչենում զինվորական գործողությունների մասնակցելու առիթ չուներ. Խաչենն ազատ եր Խոխանաբերդի և Հաթերքի իշխանների ղեկավարությամբ Զաքարյանների հանդես գալու ժամանակ. Գանձակի պատերազմին Խաղբակյաններից մասնակցում եյին Գրիգորն ու Վասակի վորդի Պապաքը. մնում է յենթադրել, վոր նա «քաջ զաւրականի» անուն պիտի ստացած լիներ Վասակ Խաղբակյանի մղած պատերազմների մեջ։ Ավելի հաստատուն կերպով այդ բանը պնդել կարելի յե Գրիգորի մասին, վորի համար և ստացավ Քեղվա ձորը, գուցե, և բերդը, Աղջոց Ս. Ստեփանոսի և Վանստան վանքերով, վորոնք Խաղբակյան նոր իշխանության մասն եյին կազմում (եջ. 51). այդ իրողությունը հասկանալի յե դառնում արձանագրությանս տված ցուցումներով։ Խաղբակյան նոր իշխանության հաստատությունից հետո՝ Զաջուռին և թողնվում նրանց «բնական» հայրենիքը Խաչենում, ինչպես տեսանք Զաջուռի և նրա վորդու Գրիգորի արձանագրություններից, (եջ. 32 – 33), մինչ դեռ մյուս յեղբայրներն այնտեղ այլ ևս յիշատակ չունին. Վասակի վորդու Պռոշ մեծ իշխանի արձանագրությունը կոշիկ անապատում ցույց է տալիս միայն տոհմի անդամների ավանդական կապերը, առանց կողմնապետական Խաղբակյանների տիրապետության վոր և է նշանի Խաչենում *։ Խնդիրն ավելի պարզում է Զաջուռի դուստրը Վանենու յիշատակարանը, Հավապտուկը «բնական տուն և շիրիմ Զաջոյ իշխանի նախնեաց իւրոյ» անվանելով (Հավել. Բ. 3.). Զաջուռ վախճանված եր արդեն 1232 թվին, յերբ գրվեցավ այդ հիշատակարանը. նորանից առաջ՝ հոր կենդանության ժամանակ՝ 1224 թ. վախճանված եյին Մնպատ և Հասան վորդիքը. Զաջուռի մյուս վորդին Գրիգորը, հավանորեն և հաջորդը, կալվածական նվիրատվություն ունի Վաճառքի սուրբ Ստեփանոս նահատակին, վոր շինված եր 1229 թվին Խաչենոյ տեր՝ Հասան - Զալալի ձեռքով։ Խաչենի Խաղբակյանները այս արձանագրության հիման վերա պետք է ստորադրված լինեյին Խոխանաբերդի կամ ներքին Խաչենի մեծ իշխաններին (եջ. 33)։

Զաջուռի դուստրն եր Վանենի, վորի անունը քանիցս հիշատակվեցավ այս և նախընթաց գլուխների մեջ. այս իշխանուհին անմահացել է հայ գրչության արվեստի պատմության մեջ յուր յերկու մեծագիր, յերկաթագիր և նկարազարդ նշանավոր ավետարաններով. դոցանից մեկը գրված է ՈՀԳ (=1224) թվին և նվիրել է Խորանաշատու հիմնադիր Վանական վարդապետին սկզբնական հիշատակարանից տեղեկանում ենք (Հավել. Բ. 4), թե նա կնության եր յեկած «Կուկին որդւոյ Աբասայ Սեւադեանց իշխանածեանց», իսկ մյուս ավետարանը գրված է 1232 թվին Գետկա վանքում։ Սևադյանց տոհմի մասին տարաբաղդաբար տեղեկություններ չունինք, բայց այն հանգամանքը, վոր իշխանուհու ավետարաններից մեկը նվիրված է Խորանաշատի վանքին, իսկ մյուսը գրված է Կայենո Գետկա վանքում, կռվան կարող է լինել յենթադրելու, թե Սևադյանք կալվածներ ունեին Մահկանաբերդի կամ Իվանեի իշխանության մաս կազմող Կայենո գավառի

* Ազդ. Հանդես. XVIII. № 2. 1908. եր. 152։

* Արցախ. Բարխուդարեան. Բաղու. 1895. 169. Սույն տողերն արդեն տպագրության եյին հանձնված, յերբ Խաչիկ ծ. վարդապետից իմացանք, վոր նա հավաքած ունի Կոշիկ անապատի բոլոր արձանագրությունները. աչքի անցնելով նրա տետրակը, հանդիպեցանք մի այսպիսի արձանագրության.

Այս է հանգիստ իշխան Խէրխանին որդոյ Հասանին թոռին Բաղաց թագաւորի թվին ՉԼԵ (=1286)։

Այստեղ հիշված Հասանը նույն պիտի լինի Գեռաքարեցի Հասան իշխանի հետ, վոր փեսայացավ Բաղաց վերջին Գրիգոր թագավորին, կնության առնելով նորա դուստր Կատային։ Այսպիսով հաստատված կարելի է համարել, վոր Կոշիկ անապատն ել Խաղբակյանների բնագավառի մասն եր կազմում, ինչպես յենթադրել ենք առանց այս արձանագրության (տ. եջ. 32 և 34)։ Այս դեպքում Խէրխանին պետք է ընդունել սովորականից ավելի յերկարակյաց։ Մեծարանց վանքի արձանագրությունները Խաչիկ ծ. վարդապետը հրատարակել է Կ. Բասմաճյանի «Բանասէր»-ի մեջ։ 1901. Փարիզ։